

## ՏԵՇԱՅԻ ՑԵՖԵՍ. ՔԱՂԱՔԸ

(**Sku** **kpk** **168-169:**)

Տալմացիոյ քաղաքաց մէջ զրից գեղեցկութեանը կողմանէ շատ նշանաւոր է Եսպինա քաղաքն, որ Ազրիական ծովուն մէջ համանուն կղզւոյն զլսաւոր տեղին է : Թէպէտ շուրջանակի լեռներ պատաժ են, բայց ուրիշ տեղեաց պէս վայրենի, լերկ, սեպացեալ և անհաճոյ տեղք մը չեն ընծայեր տեսողաց, այլ ընդհակառակն ծովէն սկսեալ ախորժական և նկարուն սառորոտ մը, զիւրելաննելի կողեր, ելեկչներ ու ծաղկեալ արդիներ կը պարզուին աշաց :

Եւզինա քաղաքը հին ատեն փարիս  
կը կոչուէր, և մինչև ցայսօր քաղեին  
հարաւային արևմտեան զին եղած  
զեղեցիկ նաւահանգստին առջև՝ բարձ-  
րացած փոքր ժայռ մը կայ, որ նոյն ա-  
նուամբ կը կոչուի:

Երկու բերդ ունի. Սպանիական բերդ՝  
որ մեծն է, և Սան Նիդոլցի բերդ՝ որ  
փոքրն է:

Տեղայիք հասարակօրէն նաւազինու-  
թեան, ձկնորսութեան, այդեգործու-  
թեան ու պտղավաճառութեան կը պա-  
րապին :

Այս կլիմային տակ արմաւենի կ'ածի, և հարաւագոյն եղած երկիրներուն բուսոց պտուղները կը հասնին. և բուսաբանն կրնայ զանել այս տեղ Եւրոպիոյ առկաւագիւտ մնկոց ճոխ հաւաքում մը: Խնձնաբոյս կ'ածի խնկունին (Rosmarino), և այնչափ առասութեամբ որ տեղացիք իրենց անուանի acqua aromatica della regina ըսուած ըմպելիքին շինութեան կը գործածեն, որով մեծ առարկառ կ'ընեն զրեթէ բուրր աշխարհիս ամեն կողմանց հետ, մանաւանդ խտալիս և Արևելք: Կը շինեն նաև ունելու miele di rosmarino ըսուածն, որ անուշահոտ և քաղցրահամ է: Բաց ասոնցմէ բուրր կզգին աղնիւ զինի կը բերէ:

Քաղաքը շատ և նշանաւոր չենքերով  
զարդարուած է . գեղեցիկ հրապարակ  
մը ունի , որ Piazza Grande կ'ըսուի . և  
Loggia կոչուած պալատը , որ հին ժա-  
մանակէ մնացած է , զեղեցիկ ճարտա-  
րապետութք շինուած , որուն արուես-  
տագէտն է Սանմիքէլէ անունով վե-  
նետիկեցի համբաւաւոր ճարտարապե-  
տըն , ուր կը նստէր Ազնուական խորհրդ  
դարանը (Consiglio Nobile) : Այս պա-  
լատս շատ վասառեցաւ 1806ին Ռու-  
սաց թնդանօթներէն : Փառաւոր է նաև  
Մայր եկեղեցին , և ընդարձակութեան  
կողմանէ նշանաւոր է նաև վեղարաւո-  
րաց մէկ վանքը :

Տեղացիք բնութեամբ կիրթ , հիւրա-  
սէր և ազնուաբարոյ են ու զուարթ , կը  
սիրեն երդ և պար : Շատ մարդասիրու-  
թեամբ կը վարուին օտարականաց հետ,  
և կը ցուցընեն անսնց ախորժանագ՝ ի-  
րենց հայրենի երկրին զեղեցկութիւն-  
ները :

ԶԱՅՆԴԱԿԱՐԱ

Գերմանացւոց գերագոյն քերդողն Շիլ-  
լէր՝ անծանօթ չէ մեր բանասէր ազգայնոց,  
որուն համառօտ կենսագրութիւնն ապ հը-  
րատարակուած է Բազմավիսիս մէջ (1851.  
եր. 9), հանդերձ իր մէկ ընտիր քերգուա-  
ծովք : Ահաւասիկ հիմա նոր ճաշակ մ'ալ  
Շիլլէրի բարձրաթոիչ հանճարոյն, մեծա-  
հըռչակ և անմահական քերթուածն 'ի Զահ-  
գակն, թերեւս գերազանց իր քնարեր-  
գութեանցը մէջ, եւրոպական ամեն լիզու-  
թարգմանեալ, և շատ բանաստեղծից ալ  
երգի նիւթ մը եղած . բայց ոչ ոք Շիլլէ-  
րի հաւասարած է, և ոչ ալ թարգմանու-  
թիւնի միշտ հաւատարիմ եղած են : Անոր  
համար մենք ջանացինք ըստ կարի գերմա-  
նացի բնագրին զուզբնթաց երթալ, զրեթէ  
նոյն չափով և նոյն ոսքով, վայելչարտ-  
նութենէն աւելի ճշգութեան ուշ աւնելով,  
առանց իմաստները յառաւելու կամ ա-  
ւելցընելու . ասոր համար յուսանք ներո-  
զութիւն գտնել եթէ աեղ տեղ մասի երեխ  
իմաստն, մինչընագիրն ալ բաւական մութ  
է իր կարձ առղերովն :